

## **ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**28.10.2022**

### **Ածանցյալների շուկայի զարգացման վերաբերյալ**

Կենտրոնական բանկի կողմից 2021 թվականից մշակվող ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացման ճանապարհային քարտեզով նախատեսված են գործողություններ և միջոցառումներ նաև ածանցյալների շուկայի զարգացման ուղղությամբ:

Աշխարհում և տարածաշրջանում տեղի ունեցող վերջին զարգացումների հետևանքով էականորեն աճել է ֆինանսական ակտիվների գների տատանողականությունը, ինչն անհրաժեշտություն է դարձնում ֆինանսական ռիսկերի կառավարման գործիքների առկայությունն ու դրանց հասանելիությունը:

Հաշվի առնելով, որ ՀՀ կենտրոնական բանկը վարում է լողացող փոխարժեքի քաղաքականություն, Հայաստանի արժույթային շուկայում 2022 թվականի մարտից սկսված տատանողական զարգացումները տարբեր տնտեսվարողների մոտ, հատկապես՝ արտաքին հատվածի հետ գործակցող, նյութականացվել են որոշակի ռիսկերի տեսքով՝ առաջացնելով ածանցյալ գործիքների կիրառման անհրաժեշտություն:

Արժույթային ածանցյալ գործիքների հասանելիության բարձրացման նպատակով Կենտրոնական բանկն աշխատել է թե՛ առևտրային բանկերի, թե՛ տնտեսվարողների հետ՝ գնահատելու այդ շուկայում առաջարկի և պահանջարկի միտումները, վեր հանելու առկա խնդիրները: Մասնավորապես, տնտեսվարողների հետ հանդիպումների ու քննարկումների արդյունքում փորձ է արվել գնահատել տնտեսության տարբեր ոլորտներում արժույթային ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքների տեսակներն ու պահանջված ծավալը:

Առևտրային բանկերի հետ քննարկվել են նրանց կողմից առաջարկվող արժույթային ռիսկերի կառավարման գործիքների ծավալների ու տեսակների ընդլայնման, դրանց հասանելիության բարձրացման հարցերը: Ֆինանսական հատվածի հետ քննարկումների արդյունքում Կենտրոնական բանկի կողմից արդեն իսկ որոշակի բարեփոխումներ են իրականացվել կարգավորման դաշտում՝ դյուրացնելու գործիքների առաջարկի գործընթացը: Այսպես, մեղմացվել են առևտրային բանկերի՝ արժույթային ռիսկերի կառավարմանը ներկայացվող այն նորմատիվային պահանջները, որոնք կարող էին դիտվել որպես ածանցյալների շուկայի զարգացման խոչընդոտ: Նաև արժույթային շուկայի ընդգրկունությունն ու խորությունը ավելացնելու համար փոփոխվել են մի շարք կարգավորումներ, որի արդյունքում ակնկալվում է, որ արժույթային շուկայի մասնակիցներն ավելի հարմար գնանշումների և գործիքների հնարավորություն կունենան:

Միաժամանակ, ֆինանսական հատվածը պատրաստակամություն է հայտնել ընդլայնելու ներկայացվող գործիքների առաջարկը: Արդեն իսկ մի շարք առևտրային բանկեր հանդես են եկել ածանցյալների (օրինակ՝ ֆորվարդային գործարքների) հրապարակային առաջարկներով, որոնց կարող եք ծանոթանալ վերջիններիս պաշտոնական կայքերում: Ընդ որում, առանձին առևտրային բանկեր պատրաստակամություն են հայտնել ցուցաբերելու անհատական մոտեցումներ տնտեսվարողներին՝ բիզնեսի առանձնահատկություններից ելնելով: Կառավարության գործընկերների հետ համատեղ հանդիպումների արդյունքում կարևորվել է նաև առևտրային բանկերի կողմից տնտեսվարողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված քայլերի իրականացումը:

Ամփոփելով՝ ցանկանում ենք նշել, որ օրեցօր աճող գլոբալ ֆինանսատնտեսական անորոշությունների ֆոնին կարևորվում է շուկայում ֆինանսական և հատկապես արժույթային ռիսկերի կառավարման գործիքների առկայությունն ու հասանելիությունը, քանի որ չձածկված ռիսկերի դեպքում տնտեսվարողները կարող են կորուստներ կրել:

Կենտրոնական բանկն ուշադրության տակ կպահի ածանցյալների շուկայի զարգացման հարցը և, անհրաժեշտության դեպքում, քայլեր կձեռնարկի առկա խնդիրների ու խոչընդոտների վերացման ուղղությամբ:

---

*Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:*

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

*հեռախոս. (010) 592592-0702*

*էլ-փոստ. [mcba@cba.am](mailto:mcba@cba.am)*

*[www.cba.am](http://www.cba.am)*